Այստեղ վերջանում է Թովմայի կեանքի առաջին շրջանը, երբ նա մօտաւորապէս 25 տարի շարունակ վանքից վանք էր անցնում, մի վարդապետից միւսին, ժամանակի հասկացողութեամբ գիտնական կամ վարդապետական կատարելութեան հասնելու։ Մենք տեսանք մասամբ, թէ որտեղ ինչ էր սովորել մօտաւորապէս։ Բայց Կիրակոս բանասէրը ընդհանուր խօսքերով իւր վարդապետին «մեծ վարժապետ», «փառաւորեալ բարունի», «խորիմաց հռետոր», «համանման փիլիսոփային (Դաւթի)», ընդորոշելուց յետոյ՝ թուում է և նորա ուսած կամ ձեռք բերած գիտութիւնները, այն է, արտաքին փիլիսոփայութեան հօթ գրքերը, «որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զհին և զնոր կտակարանացն աստուածեղէն տառիցն Հ և Բ գրոց, Ծ նուրբ գրոց... ԾԱ վիպասական պատմագիրք»*։ Մեր միջնադարեան վարդապետարանների ծրագիրն էր այս, որի մասին աւելի մանրամասնութիւններ ունինք ձեռագիրների մէջ, «Արտաքին գրեանքն որ ի դ՝ս մտանեն այս են» վերնագրով։ Բացի վերոյիշեալ հօթ իմաստասիրական գրքերից, այդ ցուցակի մէջ են մտնում Նիւսացու, Աստուածաբանի, Բարսղի, Փիլոնի, Դիոնեսիոս Արիսպագացու անուան հետ կապուած որոշ գրքեր, որոնք «Նրբեր» կամ «Նուրբ գրեանք» էին կոչւում. Հին և Նոր կտակարանի «ԺԸ. մեկնիչ», ինչը հին և ինչը նոր կտակարանից**։

Ի հարկէ, պէտք չէ կարծել, որպէս թէ այս բոլոր գրքերն ու գիտութիւնները Թովման ուսումնասիրել է իւր կեանքի առաջին կամ աշակերտութեան շրջանում։ Մի մասը նա կարող էր յետոյ ուսումնասիրած լինել. յատկապէս Կիրակոսի շեշտած հմտութիւնը ձեռք է բերել նա վարդապետական աստիճան ստանալուց յետոյ, բայց թուած գրքերի և գիտութիւնների մեծագոյն մասին նա ծանօթ էր արդէն ուսանողութեան շրջանից։ Այս հանգամանքը հարկ համարեցինք փոքր ինչ աւելի պարզել՝ ոչ միայն Թովմայի գիտութեան մասին գաղափար տալու նպատակով, այլ և թէ առաջնակարգ վարդապետները ինչպիսի պատրաստութիւն էին ստանում իրենց աշակերտներից, նրանց աստիճան կամ գաւազան տալու համար։ Բացի դորանից ընծայացուն պէտք է բերան անէր «զգիրս ասացուածոց վարդապետական կարգի», այսպէս էր գոնէ Գրիգոր Տաթևացու վերաբերութեամբ***, երբ նա Որոտնեցու հրամանով պատրաստւում էր վարդապետական գաւազան ստանալու։

---

* Նոր Նիւթեր. Ար. 758. (1).

** Ձեռ. Ս. Էջմ. № 2290/2190. 124բ. Համեմ. նորբ գրքերի մասին. Арх. Месропъ Теръ-Мовсисянъ. Переводъ Библіи. СП. 1902. եր. 104—105։

*** Մեծոփ. Պատմ. Լանկ. 56.